Դանիել Վարուժան

Աստուծո լացը

Գեղեցիկ բաները արցունքի մեջ կը ծնանին:
ՌԸՆԱՆ

Երբ միջոցին մեջ տեղի տրված չէր
Դեռ Ոչընչությունն այս Տիեզերքին՝
Ես կարծեմ Աստված բան մը կ'որոներ՝
Որ դարման ըլլա տաղտուկի վերքին:

Շրջան ըրավ Ան միջոցը մեկեն,
Եվ հոն իրմե զատ բան մը չըգտավ.
Էություն մ'ուզեց իր Էութենեն.
Իր Էությունն իր արձագագն եղավ:

Հետո դառնալով, տըխուր և մորմոք,
Համըր լըռության և կույր Ոչինչին՝
Ան իրենցմե ինչ մ'ուզեց և անոնք
Ինքզինքնին տըվին, կամ բան չըտըվին:

Երբ Անհունն այդպես դատարկ գտավ Ան,
Իր մեջ ըզգաց խոր, դառնակըսկիծ ցավ.
Եվ Լըռության վրա ու Ոչընչության
Հուսահատութենեն սըրտաբուղխ լացավ:

Վարն իր արցունքներն ուզածը տրվին՝
Կազմելով մեյմեկ աստղեր երկրնքին.
Եվ Բանաստեղծին նրման Աստված ալ
Որպեսզի ստեղծե՝ հարկ եղավ նախ լալ: